ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 862-Ա «16» փետրվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԲԵՐՏ ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՈՆԻ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Անտոնիի քաղաքապետ Ժան Իվ Սենանի հրավերը՝ Անտոնի քաղաքի փողոցներից մեկը «Դավթաշեն» անվանակոչման արարողությանը մասնակցելու, ինչպես նաև երկկողմ համագործակցության հարցեր քննարկելու նպատակով.

1. Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ալբերտ Հովասափյանին՝ ս.թ. ապրիլի 16-ից 20-ը ներառյալ գործուղել Ֆրանսիայի Հանրապետության Անտոնի քաղաք:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված ծախսերն իրականացվում են Դավթաշեն վարչական շրջանի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ՝ գիշերավարձի, որը հոգում է հրավիրող կողմը:
3. Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ալբերտ Հովասափյանի բացակայության ընթացքում վարչական շրջանի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Մուշեղ Ասլանյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ